

«ԵՐԿԻՐԸ ՈՉ ՄԻԱՅՆ ԶԻՆՎՈՐՆԵՐՈՎ ԵՆ ՊԱՀՈՒՄ, ԱՅԼԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ, ԳԻՏՈՒԹՅԱՄԲ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ»



ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն վերջերս ամփոփել է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթի արդյունքները: Մրցույթով նախատեսվում է մինչև 2 տարի տևողությամբ դրամաշնորհներ տրամադրել 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերին՝ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար:

Մրցութային ծրագրի համար հատկացված ընդհանուր գումարը 686 միլիոն դրամ է: Գումարի մոտ 17 %-ը հատկացվել է ֆիզիկային, 12 %-ը՝ կենսաբանությանը, 8,5 %-ը՝ գյուղատնտեսությանը, 4,5 %-ը՝ բժշկագիտությանը, 4,5 %-ը՝ հումանիտար գիտություններին, 14 %-ը՝ հայագիտությանը և սոցիալական գիտություններին:

Այս մրցույթի արդյունքների և հետագա ծրագրերի մասին զրուցում ենք գիտության պետական կոմիտեի նախագահ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ:

- Պարոն Հարությունյան, ի՞նչ սկզբունքներով են ընտրվել գիտական ծրագրերը:

- Անցյալ տարի հոկտեմբերին գիտության պետական կոմիտեն գիտական ու գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման նպատակով հայտարարել էր գիտական թեմաների մրցույթ: Թեմատիկ ծրագրերը նախատեսված են բազային ծրագրերին նպաստելու և փոքր խնդիրների լուծման համար: Այդ պատճառով էլ ակադեմիական ինստիտուտների բյուջեի 80 տոկոսը նախատեսված է բազային ծրագրերի համար: Կարևորագույն նշանակություն ունեցող ծրագրերը ֆինանսավորվում են բազային գումարներով:

Թեմատիկ ֆինանսավորման մրցույթն անցկացվել է 3 փուլերով: Առաջինը տեխնիկական փորձաքննությունն էր: Ի տարբերություն նախորդ անգամների, մենք պահանջել ենք, որ ծրագրի հեղինակը վերջին 6 տարում ունենա 5 տպագրված աշխատանք գիտական պարբերականներում: Եվ ներկայացված մոտ 683 գիտական ծրագրերից 140 նախագիծ տեխնիկական փորձաքննություն չի անցել:

Երկրորդ փուլը գիտական փորձաքննությունն է, որի ընթացքում որոշվեցին այն ծրագրերը, որոնք պետք է ֆինանսավորվեն, և երրորդը բողոքարկման փուլն է: Այս մրցույթը նախորդներից էապես տարբերվում է: Նախ և առաջ թեմատիկ ծրագրերն այստեղ ավելի շատ նման են դրամաշնորհների, խիստ մրցութային են և բավարարում են այն պահանջները, որոնք ընդունված են աշխարհում: Մենք այստեղ առաջին անգամ օգտագործել ենք անկախ փորձագետների համակարգը:

- Ինչպե՞ս է ձևավորվում անկախ փորձագետների համակարգը:

- Նախկինում ունեցել ենք 12 թեմատիկ հանձնաժողով, որտեղ ընդգրկված էին բազմաթիվ գիտնականներ, որոնք միաժամանակ և՛ փորձաքննական հանձնաժողովն էին

ներկայացնում, և՛ հանդես էին գալիս որպես փորձագետներ: Արդյունքում նույն մարդիկ աշխատանքները ենթարկում էին փորձաքննության, որոշում էին՝ որ աշխատանքը ֆինանսավորել, այնուհետև հաշվետվություններն էին ընդունում ու գնահատում: Արդյունքում ստացվել էր այնպես, որ տարիներ շարունակ նույն ազգանուններով մարդիկ ստանում էին մշտական ֆինանսավորում: Այսինքն՝ ավանդույթ էր դարձել, և մարդիկ վարժվել էին, որ իրենց թեմաները, լավը լինեին, թե վատը, միևնույն է, ֆինանսավորվելու էին: Նույն հանձնաժողովն իրավունք չունի և՛ փորձաքննություն կատարելու, և՛ ֆինանսավորման մասին որոշումներ կայացնելու, հետո էլ՝ վերստուգելու: Ամբողջ աշխարհում նման պրակտիկա չկա: Մենք այս գործընթացին պատրաստվել ենք 1,5-2 տարի՝ ստեղծելով անկախ փորձագետների շտեմարան: Բոլոր բուհերից խնդրել ենք այն մարդկանց ցանկը, ովքեր կարող են լինել փորձագետներ: Բնականաբար, փորձագետները պետք է բավարարեն որոշակի պայմանների. լինեն ակտիվ աշխատող գիտնականներ, հրատարակվեն տարբեր ամսագրերում, թեմաների ղեկավարման փորձ ունենան և այլն: Մենք թույլ ենք տվել նաև գիտնականների ինքնառաջադրման տարբերակը: Այսպես մեզ մոտ հավաքագրվեց տարբեր ոլորտների մոտ 1000 գիտնական: Բայց հաշվի առնելով, որ Հայաստանում փորձաքննություն իրականացնելը բավականին դժվար է, բոլորը միմյանց ճանաչում են, որոշեցինք, որ փորձաքննություն պետք է արվի նաև արտասահմանում: Արտասահմանցի գիտնականները, կարծում եմ, ավելի անաչառ կլինեն: Այստեղ նույնպես խնդիր առաջացավ. բանն այն է, որ արտասահմանցի փորձագետների հնարավորություններն օգտագործելը մի շարք խնդիրների հետ է կապված: Նախ և առաջ մեծ մասը հայերենին չի տիրապետում, հետևաբար ծրագրերը պետք է խնդրեինք նաև անգլերենով, բացի այդ, կա նաև ֆինանսավորման հարցը: Մենք դիմեցինք աշխարհի 25 երկրների հայկական գիտական կառույցների, որպեսզի մեզ օգնեն փորձագետների հարցում: Առայժմ նրանք փորձաքննություն կիրականացնեն անվճար, հետագայում կնտաձենք նրանց ֆինանսավորման հարցը լուծելու ուղղությամբ: Փորձագետների մեջ կան նաև այլազգիներ: Այս տարի մենք համագործակցել ենք 13 երկրների 80 փորձագետների հետ: Մեր շտեմարանում այսօր գրանցված է մոտ 1500 փորձագետ:

-Որքանո՞վ են այդ փորձագետներն անկախ:

-Փորձագետը կոչվում է անկախ, եթե գնահատական է տալիս միայն իր անունից: Մենք փորձագետների մասին ունենք մանրամասն տվյալներ՝ վերջին 5 տարում տպագրված աշխատանքները, աշխատավայրը: Եթե փորձագետը տվյալ ծրագրի հեղինակի հետ վերջին 5 տարում նույն վայրում է աշխատել կամ ունի համատեղ աշխատանք, ապա տվյալ ծրագրի փորձաքննություն չի կատարում: Համակարգիչն այս ամենը գտելուց հետո տալիս է կոնկրետ ծրագրի հավանական փորձագետների անունները: Այնուհետև համապատասխան մասնագիտական հանձնաժողովի նախագահն այդ ցանկից ընտրում է պոտենցիալ որակյալ փորձագետներին, ում հետ կնքվում է պայմանագիր: Վերջիններս պարտավորվում են պահպանել գաղտնիությունը, լինել անաչառ: Եթե փորձագետը հեղինակի հետ ունի մասնագիտական կոնֆլիկտ, ապա խնդրում ենք, որ հրաժարվի փորձաքննությունից: Յուրաքանչյուր աշխատանք ուղարկել ենք 2 փորձագետի, աշխատել ենք, որ փորձագետներից մեկը լինի արտերկրից, մյուսը՝ տեղացի: Եթե 2 փորձագետների նշանակած միավորների տարբերությունը 50-ից ավելի է, համարել ենք, որ նրանցից մեկն անաչառ չի եղել, և աշխատանքն ուղարկել ենք երրորդ փորձագետին: Փորձագետների գնահատականից հետո հանձնաժողովն աշխատել է վարկանիշային ցանկի վրա: Հանձնաժողովը սկսում է աշխատել, երբ փորձաքննությունն ավարտվել է, նրանք փորձաքննության հետ ոչ մի կապ չունեն: Հանձնաժողովի անդամները ցանկության դեպքում կարող են հավանության արժանացած ծրագրերը ևս մեկ անգամ

նայել: Եվ եթե նրանք ունենում են հիմնավոր պատճառներ՝ բարձր բալեր հավաքած ծրագիրը մերժելու, ապա հանձնաժողովն իրավունք ունի մերժման որոշում կայացնելու: Նման դեպք եղել է, օրինակ, հայագիտության ոլորտում: Երկու ծրագիր մերժվել է. պատճառաբանությունն այն էր, որ դրանք վերաբերում էին գրքի հրատարակմանը: Հանձնաժողովը փաստեց, որ գրքի հրատարակումը գիտությունն չէ, այլ գիտական արդյունքի ամփոփում: Բյուջեի 90 տոկոսը մենք երկրորդ փուլով բաշխեցինք, և 100 ծրագիր երկրորդ փուլով ֆինանսավորվեց: Երրորդը բողոքարկման փուլն է: 440 ծրագիր մրցույթը չի անցել, և մոտ 250 բողոքարկում է գրանցվել:

- Դրամաշնորհի չափը որքա՞ն է:

-Գումարի մոտ 60 տոկոսը նախատեսված է որպես աշխատավարձի ֆոնդ, մնացածը՝ նյութերի ձեռքբերման, գործուղումների և այլ ծախսերի համար: Գումարի չափը շատ մոտ է եվրոպական դրամաշնորհներին: 5-հոգանոց խմբի համար մինչև 6,5 միլիոն դրամ է տրվում 1 տարվա համար: Այսինքն՝ խմբերը ռեալ հնարավորություն են ստանում նորմալ գիտական աշխատանք կատարելու և ստանալու նորմալ արդյունքներ:

- Երիտասարդ գիտնականներին խրախուսելու համար ի՞նչ է արվում:

-Երիտասարդ գիտնականների համար մենք հատուկ մրցույթներ ունենք՝ ասպիրանտական և երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրերը: Ասպիրանտական ծրագրերն անհատական են, դրանց արժեքը մոտ 1,5 մլն դրամ է, որ տրվում է ասպիրանտներին, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գիտական թեզը հաջողությամբ իրականացնելու, մասնակցելու գիտաժողովի: Բացի այդ, կան երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) աջակցման թիմային գիտական ծրագրեր, դրանք երկու տարվա ծրագրեր են՝ տարեկան 3,5 մլն դրամ արժողությամբ: Եթե դիտարկենք նախորդ տարիների մրցույթների դիմած գիտնականների տարիքային բաշխումը, կտեսնենք, որ 55-60 տարեկանները 15 տոկոս են, 70 տարեկանները մոտ 20 տոկոս են: 25-40 տարեկան տիրույթում զրո է: Այսինքն՝ այս տարիքային խմբում, որ գիտնականը կարող է լուրջ գիտական արդյունքներ տալ, գիտական թեմայի ղեկավար չունենք: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Պատասխանը միանշանակ է՝ չեն թողել: Գիտության պետական կոմիտեն պետական քաղաքականություն որոշող կառույց է: Իմ թիվ մեկ խնդիրը խելացի, երիտասարդ գիտնականին օգնելն է, որպեսզի վաղը նա գիտության մեջ առաջնորդ դառնա: Թող ինձ ներեն տարիքով գիտնականները, ես խոնարհվում եմ նրանց գիտական վաստակի առաջ, բայց պետք է հարգել նաև երիտասարդներին, որոնք կյանքի ճանապարհ են անցնելու: Հաջողությամբ բուհ են ավարտել, և նրանց թույլ չեն տալիս թեմաներ ղեկավարել: Այդ պատճառով որոշեցինք հատուկ երիտասարդների համար անցկացնել գիտական ծրագրերի մրցույթ: Ես դա համարում եմ գիտության պետական կոմիտեի ամենակարևոր արդյունքներից մեկը: Մենք այսօր պատրաստում ենք գիտության ապագա լիդերներին: Այս մրցույթով 32 դրամաշնորհ է բաշխվելու: Նախկինում ֆինանսավորել ենք 22-ը, հիմա ևս 32 գիտական նոր ղեկավարներ կունենանք, որոնք գիտական շատ լավ ծրագրեր են ներկայացրել և շահել: Այս մարդկանց արդյունքը կզգանք 5-6 տարի անց: Այս շահելների վրա ես խիստ ուշադրություն եմ դարձնում, պետք է օգնենք, աջակցենք, որպեսզի մեր երիտասարդները տեսնեն, որ պետությունն իրենց կողքին է: Թող հասկանան, որ կարող են փող վաստակել, իրենց գլխով ընտանիք կերակրել:

- Գիտության ոլորտում խիստ կարևոր է միջազգային համագործակցությունը: Այդ համատեքստում ի՞նչ ձեռքբերումներ ունեք:

-Գիտությունը բաց համակարգ է: Առանձին վերցրած գյուղում, քաղաքում գիտություն չի զարգանում: Եթե ցանկանում ես ունենալ լավ գիտություն, պետք է ունենաս լավ միջազգային կապեր: Շատ կարևոր են երիտասարդների շփումները հայտնի

գիտնականների հետ: Այդ նպատակով մենք իրականացնում ենք ամառային դպրոցներ: Մինչև գիտության պետական կոմիտեի ստեղծումը ոչ մի միջազգային պայմանագիր գիտության ոլորտում չենք ունեցել: ՀՀ-ում միջազգային գիտական կապերը եղել են անհատների մակարդակով: Այսօր գիտական կապերը պետական մակարդակով են հաստատվում: Մենք արդեն պայմանագրեր ենք ստորագրել CRDF-ի (ԱՄՆ), Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի ֆունդամենտալ հետազոտությունների հիմնադրամի, Բելառուսի գիտության և տեխնոլոգիաների կոմիտեի, ՌԴ հումանիտար հիմնադրամի, Գերմանիայի գիտության և տեխնոլոգիաների նախարարության հետ: Շատ շուտով պայմանագիր կստորագրենք իտալացիների հետ: Մինչև տարեվերջ մենք կֆինանսավորենք մոտ 200 ծրագիր: Հայաստանն այն երկիրն է, որ 700 օրիգինալ թեմա ունենալ չի կարող: 3-միլիոնանոց երկրում նախկինում 700 թեմատիկ ծրագիր է ֆինանսավորվել: Կներեք, ուռճացրած թիվ էր՝ որևէ կերպ չհիմնավորված: Մեր հաշվարկներով մոտ 200 օրիգինալ թեմա կարող ենք ունենալ, այդ 200-ը մենք կապահովենք: Այն մարդիկ, ովքեր այս ծրագրերով չեն անցել և բողոքում են հիմա, կարող են մասնակցել հաջորդ մրցույթներին:

- Գիտության պետական կոմիտեն իրականացնում է Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր: Նպատակը ո՞րն է:

-Արցախը մեր քաղաքականության կարևորագույն խնդիրներից եմ համարում: Արցախում շատ բան է փոխվել դրական իմաստով, սակայն գիտական հետազոտությունների մակարդակը, ցավոք, բավականին ցածր է: Եթե մենք ցանկանում ենք ԼՂՀ-ն լինի անկախ, ամուր երկիր, պետք է ունենա նորմալ կրթություն և գիտություն: Երկիրը ոչ միայն զինվորներով են պահում, այլև կրթությամբ, գիտությամբ, տնտեսությամբ: Այդ իսկ պատճառով համատեղ աշխատելու պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Արցախը մենք համարում ենք Հայաստանի մի մասը, և այն պետք է հնարավորություն ունենա մասնակցելու մեր ծրագրերին: Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիրը միջազգային կարգավիճակ կստանա, մենք առանձնացրել ենք ԼՂՀ-ի համար խիստ կարևոր 5 ոլորտ՝ կենսատեխնոլոգիա, քիմիա, գյուղատնտեսություն, ֆիզիկա, քաղաքաշինություն: Այս ոլորտներից 5 ծրագիր կստանա ֆինանսավորում: Գումարի 10 տոկոսն Արցախն է վճարելու, 90 տոկոսը՝ ՀՀ-ն: Յուրաքանչյուր ծրագրի արժեքը կլինի 4 մլն դրամ: Որպեսզի պատկերացնեք, թե դա ինչ գումար է, ասեմ, որ ԼՂՀ 2011 թ. գիտության բյուջեն 18 միլիոն դրամ է: Ծրագիրն ունենալու է գիտական կոնսուլտանտ, որը կլինի ՀՀ-ից, իսկ թիմը՝ Արցախից: Ֆինանսավորումը սկսվել է ապրիլի 1-ին: 2012-ից Լեռնային Ղարաբաղի հետ ունենալու ենք նաև պետական նպատակային ծրագիր, որը կիրականացվի ջրային ռեսուրսների ինստիտուտի, Երևանի ճարտարապետաշինարարական համալսարանի և Արցախի պետական համալսարանի հետ համատեղ: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել և համապատասխան մեթոդական աշխատանքներ կազմակերպել Արցախի ջրամբարների նորմալ աշխատանքի համար: Ջրամբարները խիստ կարևոր, ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներ են, և այնտեղ մենք լուրջ գիտական անելիքներ ունենք:

Զրուցեց Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ